



## 11. ԽԵԼՔՈՎ ԱԽՉԻԿ

Թակավորըմ ուր վոզիրին կը փործա՛, խի խելախասս ա, թի չէ: Կամ չէ՛ ո՞ր մեկ խելախասս մարթուց էտա խոսք տը խասկընա, օր էնա ուր վոզիր:

Կը կանչա վոզիրին, կասա. - Վոզիր, քյե ոսկի՛մ տամ, տար մեկ ոսկու սըջադա՛, մեկ խու ու իմ ոսկին էլ պե: Համա ընցկուն էնես, օր հիմանամ, թի էտա ոսկով ես առե: Քյե շատ փարա կա, չըլնի՛ թի էնորով առնես:

Վոզիր էլա՛վ, առավ ոսկին ու ընգա՛վ ճամբախ:

Շատ գյընա՛ց, քիչ գյընա՛ց, մեկ Աստված գյինա, ճամխի խետ պատահավ մեկ գյեղացի մարթու՛մ:

Վոզիր չըճանչըցվի թի վոզիր ա, հասարակ մարթու խալավ ա խա՛գյեր:

Վոզիր գյեղական օր կը տեսի, կասա. - Գյեղացի՛, ծեր գյեղ զա՞տն ա:

Ասաց. - Զուր հիրիկուն կը խասինքյ մեր գյեղ: Կեղիս ծի կոնախ, քյե խաց, ճուր կը տամ, չուր խըլխտուն էլի՛, գյընա՛:

Կերթան, խասին մեկ պըրակի մոտ, վոզիր գյեղացուն կասա. - Մա՛րթ, արի՛ թաք-թաք մըտինքյ պըրակ, ջուխտ-ջուխտ էլնինքյ:

Գյեղացի մարթ կը մտածա. «Էսա մարթ ծու՞ռ ա, ի՞նչ ա, ի՞նչըխ թաք-թաք կը մըտնի, ջուխտ-ջուխտ կէլնի»:

Մե քիչ էլ ճամբախ կերթան:

Վոզիր մարթուն կասա. - Արի՛, ես եղիմ ծի, տու ծի խեծի՛, յան տու եղի ծի, ես քյե խեծիմ:

Գինն գյեղացին կը մտածա. «Վոլլն՛, էսա մարթ ծուռ ա»:

Կը խասիճ գյետի մոտ, վոզիր գյեղացուն կասա. - Մարթ, յան արի՛, էղի՛ կարմունջ, ես քյե ընցիմ, յան ես էղիմ կարմունջ, տու ծի ընցի:

Էն ժամանակ էլըմ կասա. «էսա մարթ ծուռ ա»:

Կը թոնիճ, կերթան գյեղացու գյեղ: Մարթ կառի վոզիր, կը տանի հողեն:

Ինքյն կը տաննա, կերթա, ախչըկեն կասա. - Մե մարթըմ էղավ ծի հինգեր, պերած եմ հողեն, փըշում խաց տո՛ւ, տանեմ, էնի ուտա:

Ախչիկ կէլի, խաց ու քնլամ տա, օր տանի, մեհվան ուտա, խեր կը ծըծղա:

Ախչիկ կասա. - Ընչի՞ կը ծըծղաս, դանդա՛:

Կասա. - Էն մարթ ծուռ ա:

Կասա. - Ինչպե՞ս ծուռ ա:

Կասա. - Ծանխու խետ օր խասանք պըրակի մեչ, ծի ասաց՝ թանք-թանք մըտիմք, ջուխտ-ջուխտ էլիմք: Մե քիչ էլ գանցիմք, ծի ասաց՝ յան տու էղի ծի, ես քյե խեծիմ, յան ես էղիմ ծի, տու ծի խեծի: Քիչ մ՛ էլ գանցիմք, խասանք գյետի մոտ, ծի ասաց՝ յան տու էղի կարմունջ, քյե ընցիմ, յան ես էղիմ՝ ծի ընցի:

Ախչիկ էլ քնլամ, խաց չտուր, էլնվ մեկ թուփ սեր, տասվերկու խատ խավու ծու, հիսունվերկու խատ էլ խաց էտու խոր, ասաց. - Տար, տիր էն մեհվընի անանձ, թըխ ուտա:

Եփ օր տարավ հողեն, էտիր վոզիրի հանեմ, վոզիր տեսավ, խասկըցավ, օր էտի մեկ մարթու կերակուլ չի, էտի փործ ա: Էն տեղաց մարթերաց, տանտիրոջ, մեկէլին ասաց. - Մարթե՛ր, ծե պան մ՛ասիմ, չըհըռըկիք. խըլղի լուսնակ ամիս մի անգամ կը պուլիրի, ծեր լուսնակ միշտ խո՞ն ա: Մեկէլ տ՛ասիմ. հըմեն մարթու տարին տասվերկու ամիս ա, ծեր հան հան տաս ամիս ա: Մեկէլ՝ խըլղի տարին հիսունվերկու շնպան ա, ծեր հան հան քանու-նեվո՞ւթ տ՛էղի:

Էտա գյեղական էլնվ, վոզիրին կանիմ ծեծըմ տըվին, ասին. - Էսա մարթ ծուռ ա:

Խեր առավ խաց, տանցավ, էկավ տուն:

Ախչիկ ասաց. - Դանդա՛, էսա մեհվան խաց չըկերա՞վ:

Ասաց. - Չէ՛, մեհվան էնքան տըփեցին, օր մ՛ ասե:

Ասաց. - Ընչի՞ խամար:

Ասաց. - Կասեր մե՛ խըլղի լուսնակ ամիս մեկ անգամ կը պիլիբի, ծեր հա՛ խոռ ա:

Ախչիկ ասաց. - Դա՞դի՛, չէրի՞ թի տու սերից քիչըմ կերեր ես, օր խոսվեր ա:

Խեր ասաց. - Խա՛, ախչի՛, ճամբա՛խ քիչըմ կերեր եմ:

- Էլ ի՞նչ ասաց, դա՞դի՛:

Ասաց. - Կասեր, թի խըլղի տարին տասվերկու ամիս ա, ծեր միշտ տասն ա:

Ասաց. - Չէրի՞ ճամբա՛խ էրկու ծու կերեր ես:

Ասաց. - Խա՛, կերեր եմ:

Ասաց. - Էլ ի՞նչ ասաց:

Ասաց. - Խըլղի տարին հիսունվերկու շապաթ ա, ծե հա՛ հիսուն ա:

Ասաց. - Դա՞դի՛, չէրի՞ խացն էլ ես կերեր:

Ասաց. - Խա՛:

Ախչիկն ասաց. - Գըմա՛, էն մեհվան պե՛ տսեղ, տիւքը էնոր լայեղ չեք:

Եփ օր վոզիրն էկավ նստավ, ախչիկ խաց էպի, իտիր վոզիրի հառեծ:

Վոզիր պըշկաց ախչըկա աչքին, տեսավ մեկ աչքն ճախառ էր, ասաց. - Դո՞դա՛, քյե լավ ա շինած, համա փանջա՛րեն քիչ ճախառ ի:

Ախչիկ խասկըցավ, օր իր խամար ասաց:

Վերճ վոզիր ասաց ինքը ուր, թի՛ էսա ախչիկ էսա պանի թադաիր չըտեսի, թու մարթ չըկանա:

Ասաց. - Ախչի՛, թակավոր մեկ ոսկի տըղեր ա ծի, կասա՛ ծի տը պերես էտա մեկ ոսկով մեկ խու, մեկ սըջա՞դա, էլըմ իմ ոսկին էլ ետ պերես: Էն էլ գա՛ս, ծի պատմես, թե ի՞նչ կերպով ա, օր հիմանամ: Բա՛լկո տու տանես, քու փարով պերես:

Ախչիկ ասաց. - Էտի կոլա յա: Ոսկին տա՛ր, տու՛, մեկ ոսկու խու առ: Էտա խույու պըրտեր կըտրա՛, տու՛ շինել էրկու սըջա՞դա, մեկ ծախա՛, տու, մեկ ոսկի ա՛ռ, էն մեկէլ սըջա՞դեն, խուն, ա՛ռ, տա՛ր քու թակավորին:

Ինքյն ոսկին տարավ, էտու, մեկ խու առավ: Խույու պըրտեր կըտրեց, էրաց էրկու սըջա՞դա, մեկ ծախեց, էտու, մեկ ոսկի առավ:

խուն ու մեկ սրջանդեն առեց ու թակավորի խամար տարավ:

Վերջ ախջիկ խորից խառցընեց, ասաց. - Դանդա՛, տու գլխտ-  
ցա՞ր էնոր առակներ ի՞նչ ին, օր են քյե ասաց խընդ ճամխին:

- Չէ՛, չըգլխտցա:

- Քյե ասիմ: Էն ճամանակ, օր են քյե ասե՛ արի թաքյ-թաքյ  
մըտիմք պըրակ, ջուխտ-ջուխտ էլիմք, տուքյ առանց փետի եք  
էղե, ծեր ծեռքեր փետ չէղե: Էնու խամար ասե՛ արե մե մեկ փետ  
կըտրենքյ, մեր ծեռ պըռնենքյ, էլնենքյ ջուխտ: Փետ մարթու ախ-  
պեր ա, մարթ շընից կը պըրծու, գազանից կը պըրծու, գողից կը  
պըրծու: Էն, օր ասե քյե՛ տու արի էղի ծի, ես քյե խեծիմ, ես էղիմ  
ծի՛ տու ծի խեծի, էն էլ էն ա ասե՛ արե մեկ մասալ ասա, տու կե-  
ղիս ծի, էմել ականջ կենա, չի նեղանա: Տուք ճամբախ կերթեքյ: Էնու խամար  
էն էտպես ասեր ա: Օր տու էկեր եքյ գյետի պըռուկ, օր էն քյե  
ասեր ա՛ արի տու էղի կարմունջ, ես քյե ընցիմ, ես էղիմ կար-  
մունջ, տու ծի ընցի, էնի էն ասեր ա՛ երկուսն էլ չըպիպընանքյ,  
գանիմքյ գյետ, յան տու պիպկըցի, ծի ընցու, յան ես պիպկընամ,  
քյե ընցուցեմ, օր երկուսն էլ բանատի տեղ չըպիպկընեքյ: Շըլկող  
կեղի կարմունջ: Տու չես խասկըցե: Էնի օր մըտավ իմ հողեն, ծի  
ասաց՝ հողեն շատ լավ հողե մ՛ա, ամա փանջարեն ճախառ ա:  
Էնի հողին չասաց, ծի ասաց, թե՛ ախջիկ, տու լավ ախջիկ ես,  
ամա քու մեկ աչք շիլ ա, ճախառ ա:

Ախջըկե խավի ծոււն, խաց, սեր օրոխկելն էլ էն ա, օր խերն  
ասաց ծուռ ա, մեկ էլ ասաց՝ թաքյ-թաքյ մըտնենք, ջուխտ-ջուխտ  
էլնենքյ, ախջիկ էնտուց խասկըցավ, թե էն մարթ կամ մեծ մարթ  
էր, կամ չէ՛ Ֆանասաթլի էր, էնոր խամար ծըվով, սերով էնի փոր-  
ծեց:

Մենքյ տաննանքյ վոզիրի պատմության վերեն:

Վոզիր առավ խուն, ոսկին, պան, տարավ թակավորի հանճև  
էտիր:

Ասաց. - Ա՛ռ, թակավոր՛ր, քու ոսկին, քու խուն, քու սրջանդեն:

Ասաց. - Շա՛տ լավ, դե՛, մեկ տե՛ղ արա ծի, խի ի՞նչըխ ես  
առե:

Վոզիր ասաց. - Մեկ ոսկի՛մ տըվեր եմ, մեկ խու եմ առե,  
պըրտեր էրեր եմ երկու սրջանդա, մեկ ծախսեր եմ ոսկի՛մ, էնու էն  
ոսկին, էն էլ քու խուն ու սրջանդեն:

Ասաց. - Վոզի՛ր, պատմա՛ խենքը՝ էտա խելքը քյե վո՞ն ա շանց տվե:

Ասաց. - Թակավո՛ր, մեկ գյեղացի ախչիկըմ՝ տասնուխինգ տարեկան, էնի յա ծի շանց տվե:

Ասաց. - Վոզի՛ր, քյե պատրաստութուն տեսի, գյընա՛ ախչիկ պե ծի խամար:

Վոզիր ասաց. - Շա՛տ լավ:

Առավ պեռներով փարա, անքան, պան, գյընաց, շըտկավ ախչըկե գյեղ:

Ախչըկե խեր ու գյեղական զանազան, թե էտնքը ընչի՞ էկան ըստեղ:

Վոզիր գյընաց, ախչըկե խոր տառ կաննավ:

Ախչըկե խոր կանչեց, ասաց. - Ախչըկեն պատրաստի՛, տանիմ թակավորին, թակավոր կուզա՞ ախչըկեն:

Խեր ախչըկեն ասաց. - Ախչի՛կ, թակավոր ճամխե, քյե կուզա:

Ախչիկ ասաց. - Խըլիսուն կերթամ:

Առավոտուն վոզիր առավ ախչիկ, ընգա՞վ ճամբախ:

Տարավ ախչիկ թակավորին: Թակավոր փըսակվավ, ամա չըգյընաց ախչըկե մոտ:

Ասաց. - Ես էտոր տը փորժեմ, խի ինչպե՞ս ա, լա՞վ ա:

Օրըմ քա՛շեց, էրկու քա՛շեց, կըռի՞վ ըսկըսավ:

Գյընաց կընգան ասաց. - Կնի՛կ, գի՛ ես կերթամ, քիւ մոտ չուն մըկա չըմ էկե: Ա՛ռ էնա փարի քյիսեն քյե:

Էրկու քյիսա էտու, մեկ տանտանկ էր, մեկ հըլին էր: Տանտանկ քյիսի պերան պաց էր, հիլինին կոծ ու ուր փանջով մահիրուկ:

Ասաց. - Կնի՛կ, կուզիմ, օր էսա մահիրուկ քյիսից առանց ճըղելու ու քակելու՝ ոսկին տանտըկես մըչ տանտանկ քյիսուն, փանջեն մընա անարատ: Մեկ էլ մեր կըսրախ իմ տըկի ծիուց քա՛շել պիտի տաս, օր մեր ծիուց քուռակ մ՛էլի: Ես իմ ծին կը խեծիմ, կերթամ կըռի՞վ:

(Պատմողը վերջեն շարունակեց այնպես, ինչպես նախապես գրված է: Կինը իր շորեր փոխած էրկան քով կերթա և հոն սադրաջե խաչի շընորհիվ կը մնա հղի անկե, անոր կնիք կը գրավե և իր էգ ծին հղի կը կեյնե թագավորի ծիուց)<sup>11</sup>:

<sup>11</sup> Ծ. Բ.